դաթեանց, Սարգիս ք՛ն. Շահվերդեանց յայտարարութեամբ ծանուցին կօնսիստօրիային, թէ ոմն թուղակրօն Ռոստոմ Քեօխա-Գաբրիէլեանց գայթակղեցնում է ժողովրդին և թուում են նորա մոլորութիւնները, որ նոյնն են, ինչ որ Սարգսինը։ Մովսէս վարդապետը բարւոք համարեց այս անգամ տնական եղանակով գայթակղութեան առաջն առնել, մեղադրած Քեօխա—Գաբրիէլեանցին կանչեցին կօնսիստօրիա և պատուաւոր քաղաքացիների ներկայութեամբ խրատեց նորան չհետեւել Սարգսի մոլորութեանցն և դառնալ հայոց եկեղեցին, որ և ձեռագրով խոստացաւ հեռանալ մոլորութիւնից . . . ։

76. Մեղադրուած խումբը Մաղաքեանի վերոյիշեալ հոգածութեան լուրը կանխապէս առած լինելով և վախենալով երեւի անհաճոյ հետեւանքներից՝ իւր մի քանի ներկայացուցիչների ստորագրութեամբ շտապեց ուղարկել 1860 թ. օգոստ 1ին յանուն Վ.հՀ. Տ. Մատթէոս Կաթուղիկոսի մի խնդրագիր, որն աւելորդ չեմ համարում դնել այստեղ ամբողջութեամբ, և է այս . . . ։

«Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի խելամուտ եղեալ մեր, թէ ոչ միայն ի մարմնական պէտս շնորհեցան կեանք, այլ և ի քրիստոնէական հոգեպէս շինութիւն ակնկալեալ յոյսն երեւելոյ. ի քանի մի ժամանակաց հետէ թողեալ զաշխարհային զուարճութեանց հանդէսս, պարապէաք ի կիւրակի աւուրս զկնի ս. պատարագին ի տան ուրեք կամ ի բացօթեայ դաշտի կամ ի սրահս իսկ եկեղեցեաց քաղաքիս յանուն Տեառն Յիսուսի վասն մեր խաչեցելոյ։

77. «Ոչ ուրեք ի կանոնագրութիւնս Հայաստանեայց եկեղեցւոյ նշմարին հետք ինչ արգելանաց եղեալ ի վերայ ընթերցանութեան սրբազան գասից, որպէս պապականն բռնազբօսէ զՀօտ իւր, այլ ի ներհակն՝ եկեղեցին Քրիստոսի հիմնի ի Սուրբ Գիրս հնոց և նորոց կոկաւանաց։

Ամենայն մահմէտականի հնամարձակ է ընթեռնուլ զկուրանն, ամենայն հրէի զՀին Կտակարանն, մինչ Հայկականս քրիստոնէութիւն արգելուցու զուսումն Սուրբ Գրոց, չ՛կամիմք և չ՛կա-